

ԳՐԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ
VI.
ԵՐԿՈՒ ՅՈՒՅԵԼԵԱՆ
(ի. Տուրգենև և Լ. Տոլսոն):

Ա.

Խուս գրականութիւնը ուուսահայերիս մտաւոր կեանքից մէջ գուցէ աւելի մեծ դեր է խաղացել, քան մեր աղգոյինը։ Կովկասահայ մտաւորականների ստուար մեծամասնութիւնը զարդացել և դաստիարակուել է ուուս հեղինակների գրուածքներով, մինչդեռ Հայոց գրականութիւնը չեմ ասում հին, դա բազմաթիւ խանդարուած ուղեղների համար մի փոտած նիւթ է—մեր նոր, աշխարհաբար գրականութիւնը նոյն այդ մտաւորականների համար կատարեալ terra incognita է։ Ասում են, թէ մի քանի երիտասարդ բանասէրներ մեր նոր գրականութեան պատմութիւնն են պատրաստել, ուրախալի և միխթարական երեսյթ։ Բայց ինչ անենք, որ միաժամանակ տեսնում ենք ուսուցիչներ, որոնք, օրինակի համար, Մուրացանից ոչ մի բան կարդացած չեն և կան ուսում առած մարդիկ, որոնք պ. Լէօյին հետեւելով կարծում են, որ Մուրացանը մարդակերութիւն էր քարոզում։

Ճիշտ է, մենք մեր գրականութեան մէջ ոչ Տուրգենեւի, ոչ Էլ Գօդոլի տաղանդներն ենք ունեցել, այնուամենայնիւ մեր Պուշեանցը, Պարոնեանը կամ Մուրացանը մեզ համար մի մի Գօդոլ ու Տուրգենև են։ Ապա մի հարցրէք, տեսնենք ուուս ուսուցիչների մէջ կդտնուին այնպիս-

իր՝ որոնք Տուրգենևի կամ Գօդոյի գրաւածքների հետ ծառնօթ չլինին։ Իսկ եթէ լինեն, եռ հաւատացած եմ, որ դրանց իբրև բացառութիւններ շուտով ցուցահանդէսներում ցոյց կտան։

Եւ մինչգեռ հայ գրականութիւնը այդպէս անարդուած է, ուսւո գրականութիւնը մեր մէջ բաւականի վարկ և պատիւ ունի, որի համար եռ չեմ կարող իմ խնդակցութիւնս չյայտնել, որովհետեւ աւելի ճօխ գրականութեան հետ ծանօթ լինելը ոչ միայն միասակար չէ, այլ և ամենայնիւ օգտակար։

Թուս գրականութիւնը միշտ սիրելի է եղել մեր ընթերցող հասարակութեանը, մասնաւորապէս մեր հայ հեղինակներին։ Մեր տռաջի դրազներից մինչեւ վերջնը, թէ ժամանակագրական կարգով առած և յժե ըստ տաղանդի-ազգուել են ուսւո հեղինակներից, բայց առաւելապէս բանաստեղծներից, քան թէ վիպասաններից։* Վերջիններիցս ամենից աւելի ազգել են մերսնց վրայ՝ Գօդով, Տուրգենև, Դոստոեվսկի, պակաս չափով՝ Գ. Ռևապէնակի, Գարշին, Կօրոլէնկօ, Զէխով, Գանչարսվի, Գրիգորովիշի, Շչեդրինի և Տօլստոյի ազգեցութիւնը շատ գժուար է նշամարել մեր արդի վիպասանութեան մէջ։ Բայց եթէ ոչ գրականութեան մէջ՝ գոնէ մեր որոշ մտաւարականների դարգացման վրայ անշուշտ անհետեանք չի անցել Տօլլուտոյի կրօնո-փիլիսոփայտական ուսումնքը, եթէ մեզ մոտ կանոնաւոր և օխտեմտափկ կերպով լինէր թարգմանութիւնը, մենք կարող էինք խօսել այն մասին, թէ որ չափով մեր հասարակութեան սիրելի են Տուրգենևը և Տօլստոյը։ Բայց, աւագ, մենք թարգմանում ենք անսիստեմ և անհաշիւ, ում խելքին ինչ որ փշէ։ Յամենայն գէպս մենք գիտենք, որ թարգմանուած են Տուրգենևի Առողինը, Նախընթաց օրը, Հայրե եւ Արդիներ, Առաջին ուր, Ասիա, Արձակ բանասեղծութիւններ և այլ մի քանի

*) Այդ մասին մի քանի ուսումնասիրութիւններ ունի արած յայտնի հայտնէր Խորի Վեռելավակին։

մանր վէպիկներ, իսկ Տօլստոյից՝ «Մանկութիւն եւ Պատաննեկութիւն», «ԿրԵյցերեան Աօմատը», «Յարութիւն» և մի շարք նրա բրոշիւրներից, եւ եթէ այդ հեղինակները ընթերցող հայ հասարակութեանը ծանօթ են, դա նրանից է, որ մենք բոլորս գիտենք և կարգում ենք ռուսերէն, իսկ ով որ չգիտէ նա այդ հեղինակների մասին, մասնաւորապէս Տօլստոյի, ստոյդ գտղափար դժուար թէ կազմի։

Բ.

Օգոստոսի 22-ին լրացաւ ոռւս նշանաւ որ վիպասանի, Տուրգենևի մահուան քսան և հինգ ամեակը։ Այդ տիսուր յորելեանը տոիթ տուեց ոռւս մամուլին յիշել հասարակութեան ամենասիրելի վիպասանին և ջերմ տուզեր նուիրել նրա յիշատակին։ Ինչպէս և շատ շատերի նոյնպէս և իմ ամենահուանած և սրտին մօտ ոռւս վիպասանը Տուրգենևն է։ Քանի քանի օրեր և զիշերներ ենք մենք նուիրել նրա վէպերի ընթերցանութեան, ինչպէս յափշտակուել ենք գեռ երեխայտական հասակում նրա «Արսորդի պատմութիւններով», յետոյ նրա մեծ ու փոքր իրական վէպերով, Այս բոպէիս գուցէ Տուրգենևը այնքան չի կարգացւում, որքան առաջ, բայց այն ժամանակ, ոկտաձ 50-ական թուականներից և մի քանի տասնեակ աարիների ընթացքում, նա սերունդների ուզեցոյց և ուսուցիչ է եղել, նրանով յափշտակուել և ոգեսրուել են ամենաանկեղծ և սուրբ սգեսորութեամբ։

Իր առաջի նշանաւոր երկը—«Արսորդի պատմութիւնների» առաջին գլուխները՝ նատարակակում է 1847 թ. երեսուն տարեկան հասակում և հէնց այն ժամանակ, երբ ուսու գեղարուեստական գրականութեան կովմողների՝ Պուշկինի, Լերմոնտովի, Գօգոլի տեղերը բաց էին մասեր։ Նա իրաւամբ գրաւում է նրանց տեղը և շարունակող է հանդիսանում ուսու գրական գեղագիտութեան, որպէսզի մահուան անկողնում այդ պատիւը յանձնէ հանճարեղն կոմո լի Տօլստոյին։

«Որսորդի պատմութիւնները», որոնք նոյնչափ գեղեցիկ են իրանց պատկերաւոր և հարուստ ոճով, որքան և մարդասիրական բավանդակութեամբումի պատմական երեսլթ են ներկայացնում ոչ միայն ռուս գրականութեան, այլ և հասարակական կեանքի մէջ. Աշ մի երկ, կարելի է ասել, այնքան մեծ շափով չի նպաստել ճորտերի շուտափոյթ ազատագրութեան, որքան այդ անկեղծ և պարզ պատմուածքները, վերցրած ռուս ճորտ-գիւղացիների կեանքից. Ինչպէս անսխալտական հայելու մէջ ռուս ժողովրդի այդ մեծագոյն, բայց մոռացուած, մասրաբանկարուած էր իր բոլոր անմիտիթար գոյներով. Մինչդեռ նոյն այդ մոռացուած ժողովրդի միջից հեռզինակը փնտրել, զաել է և պատկերօրէն նկարել է բանական Խոռ, երի, իդէալիստ Կոլինը՝ նեղ և բարի Օվսեաննիկովների, համբերատար Լուկերեաների. Ժիր մանուկների պատկերները, Հեղինակը ցոյց տուեց, որ նրանի էլ մարդիկ են և օժտուած են բազմաթիւ գրական յատկութիւններով, որոնք ուրիշ, ազատ պայմաններում կարող են զարգանալ և ընդհանուր յուածագիմութեան և բարեկեցութեան անսպառ աղբիւր գտննալ . . .

Ճորտերին ազատութիւն շնորհող կայսր Ալեքսանդր II ը, իր ասելով, մեծապէս ազգուած է եղել Տօւրդենսի այդ գեղարուեստական բարովից.

Տուրգենի առանձին ընդունակութիւն ուներ յուղել ընթերցողներին, ամբողջ հասարակութիւնը իր երեկուով. Նուրբ գեղարուեստագէտնա միենոյն ժամանակ վերին առտիճանի իրական տաղանդ էր և իւր բոլոր գրուածքների նիւթը դարձնում էր կեանքը. Նրա նշանաւոր երեսլթները, նրա երեսին բարձրացող հոսանքները. Ահա թէ ինչու նրա զլիսաւոր վէպերը՝ Խուզին (1856), «Ալնուական օջախը» (1859), «Նախընթաց օրը» (1860), «Հայրեր եւ որդիները» (1862), Ծուխը (1867), Նովը (1877), -կարելի է ասել ռուս մտաւոր կեանքի զանազան շրջանների տարեգրութիւններն են. Մտաւոր հասարակական կեանքը հերթով առաջ է քերաւմ այս կամ

այն սկզբունքը, նշանաբանը, իդէալը. և Տուրգենևը իր հերոսներին ընտրում է այդ «ուղղութիւնների» կամ աւելի լաւ է ասած տիրող ուղղութիւնների ներկայացուցիչների միջից. Գուցէ այդ պատճառով էլ նրա վեպերը վերին աստիճանի այժմէնական են եղել և դեռ ու դէմ բանակութիւնների նիւթ գառել.

Բացի իրական լինելուց-նա և անկեղծ է միշտ և իր համոզմունքները չի զոհում այս կամ այն ազդեցիկ շըռշաններին և կուսակցութիւններին դուր գալու համար եւ քառասնական թուականների գործիչները-Ռուգին Լավուցիլից և ոյլք-նոյնչափ նրա գրչի տակ իրական տիպեր են, որքան և գործունէութեան տենչով վառուած ինսառովը կամ 60-ական թուականներին ծնունդ առած Բազուռովի նման բնապաշտները:

Այս գեղեցիկ և կենդանի պատկերների ժողովածուն անգամ բաւական էին Տուրգենևի անունը անմոռանալի դարձնելու համար. բայց դրանք Տուրգենևի վրձնի արտադրութեան մի մասն են:

Իսկ ինչ ասենք նրա անզուդական կանանց տիպերի մասին, որոնք այնպիսի ոյժով գրաւում են մեզ իրանց կուսական քնքշութեամբ (Նատալիա), հոգեկան անարատութեամբ (Լիզա), անվեհեր կամքով (Ելենա) և անհունանկեղծ սիրով... Որքան մենք ոգեսրուել ենք ժամանակին այդ հերոս ու հերսուհիներով, որքան արցունք ենք մենք թափել մեր այդ սիրելի «հոգու հատուների» հետ... . . .

Դ.

Երկրորդ յոթելինար՝ հոկտեմբար լև Տօլստոյ, վասնք և պարձանք արդի Ռուսիոյ, որ Գուլիսիերի նման կանգնած նայում է իրեն դէմ բռունցքներ բարձրացնող լիլիփուտ (գաճաճ) հայրենակից հոգեսրականների վերայթա այն Տօլստոյն է, որին XX-րդ դարու սկզբին բանադրեց ռաների ուղղափառ Սինոգը և որին այսօր ամբողջ աշխարհիս մտաւորականութիւնը զմայլանքի և յարգանքի

հաւաստիքն ներկայացրեց՝ նրա 80-ամեակի առթիւ. Այս անգամ էլ մարդարէն իւր երկրում հալածանքի ենթարկուեց . . . Յաւիտենական և ողբերդական ճշմարտութիւննեւ միթէ չխրատուեցին այսօրուայ իշխողները, որ բանալը և բանադրանքը, խարոյիլը և հալածանքը երբէք կարողացած չեն և չեն էլ կարող կասեցնել մոքի արշաւանքը և նրա ազատ թռիչքը.

Թոյլ է իմ գրիչը խօսելու այս մեծ մարդու և զարմանալի տաղանդի մասին. և ինչ ասես, երբ սահմանափակուած ես տողերով և էջերով, Ընդհանուր ուրուագիծ-աւելի ոչինչ, ահա ինչ կարելի է տալ մի քանի տասնեակ տողերի մէջ:

Տօլոտոյը գեղարուեստագէտ է, Տօլոտոյը ուսուցիչ է և նրա հետ ծանօթանալ ուզողը պէտք է վեր առնի և կարդայ նրա բազմահատոր վեպերը, նրա անթիւ մանր հէքեաթները, նրա ժողովրդական զրոյցները, նրա փիլիսոփիայական ուսմունքը, նրա կրօնական վարդապետութիւնը: Յանձին Տօլոտոյի Ռուսիայում, կարծես, իրագործուեց ոյն գէպը, ինչ որ վիպական ձեռվ պատմում է մի ուրիշ ռուս հեղինակ, Դոստուկին, իր «Կարամազով եղբայրներ» վէպի «Մեծ ինկուբիդիտոր» գլուխ մէջ Խօսքս այն գէպի մասին է, երբ Քրիստոս իրր թէ գալիս, տեսնում է ինքուիզիտորների արարքները և երբ որ ուզում է բողոքել, նրան էլ Մեծ ինկուբիզիտորի հրամանով ձերբակալում են և քիչ է մնում խաչբարձրացնեն ad majorem Dei gloriam, — եւ այդ բոլորը անուում է Քրիստոսի անունով: Իսկ Կրօնշտատի հօան քահանան ազօթք է հնարել, որի մէջ խնդրում է Աստուծուն շուտով վերջ դնել Տօլոտոյի կենաց օրերին . . . Սա ծաղը է. կհարցնէք դուք:

Ահա մի մարդ, որը քարոզում է մարդկանց տառնեակ տարիների ընթացքում, — փոխելով նիւթը և գաղափարը, փոխուել է և ինքը, բայց մի բանում նա միշտ անփոփոխ և նոյնն է մնացել՝ ճշմարտութեան հետապնդման մէջ: Ինքն իրան իր գոյութեան մասին առաջին հաշիւը տալու օրից (տես նրա «Մանկութիւն» և պա-

տանեկութիւն) նա աշխատել է գտնել մարդկային կեանքի նպատակը:

Ի՞նչ է ճշմարտութիւնը—ահա այն Քրիստոսի կողմից անպատասխան մնացած հարցը, որը տանջում, զբաղեցնում է Տօլստոյ պատահուն և երիտասարդին, հասուն տղամարդուն և—ով գիտէ—գուցէ մինչև օրս:

Բայց չէ, այն օրուանից, երբ նա գրեց իր նշանաւոր Խոստովանակիր—այդ հարցը նրա համար արդէն պարզ էր. նա պատասխանը գտել էր և ես կարծում եմ, որ նա յաւիտենականութեան զիրկն էլ այսուհետեւ կմտնի լիովին հանգիստ սրտով և հաւատացած լինելով, որ նա ճշմարտութիւնը վերջնականապէս գտել է:

Ես էլ ուրիշների նման նրա հետ տեսակցելուց և խօսմելուց ու ետոյ եկայ այն եղբակացութեան, որ նրա հաւատը և համոզումը անդրդուելի են: Այդ գէպըում, միմիայն այդ գէպքում Տօլստոյը մի ֆանատիկոս է, իր սիրեցեալ, տանջանքներով ձեռք բերած զաղափարի հաւատարիմ սպասաւոր՝ ոչ ծաղր, ոչ տգիտութիւն, ոչ էլ հալածանք նրան իւր շաւզից շշեղեցին: Տօլստոյը մնում է Տօլստոյ, թէպէտ և Ռ. Սինօդից բանադրեալ:

«Հաւատում եմ Աստծուն, որ ըմբռնում եմ իրին Ոգի, իբրև Աէր, իբրև սկիզբն ամենայնիւ Հաւատում եմ, որ նա իմ մէջ է, իսկ ես նրաւ Հաւատում եմ», որ Աստուծոյ կամքը ամենէն աւելի պարզ և հասկանալի արտացյալուում է մարդ Քրիստոսի վարդապետութեան մէջ... Հաւատում եմ, որ մարդու իսկական բարիքը՝ Աստուծոյ կամքի կատարման մէջն է, իսկ նրա կամքն է, որ մարդիկ սիրեն միմեանց և այդ պատճառով ուրիշների հետ վարուեն այնպէս, ինչպէս որ կցանկային, որ իրանց հետ վարուէին: այդ է ամբողջ օրէնքը և մարդարենէրը, ինչպէս որ ասած է և Աւետարանում*»: —

Ահա Տօլստոյի կրօնա-փիլիտովայական գաւանանքի ամփոփումը իրա խօսքերով: Իբրև հետեանք արդէն այդ

*) Առօնքած գրուածքից:

առուածապատգում՝ սիրոյ-պահանջւում՝ է չարին չարով չպատախանել։ Այդ քրիստոնէական համբերապարութեան և անյիշաշարութեան ուսմաւնքը Տօլստոյը քարոզում է այն քան անշեղ, որ երբ մեկը նրան հարց է տուել «կարող եմ ես արդեօք սպանել ինձ վրայ յարձակուող գայլին» — նա պատասխանել է՝ «չ, չպէտք է, որովհետեւ եթէ ես կարող եմ նրան սպանել, ուրեմն և շահը և մարդուն — և ուսման որոշել անկարելի կլինի։ Եթէ թոյլ տալ, որ ես կարող եմ սպանել, որ պարտական եմ դիմադրել չարին, այն ժամանակ չարիըն և անարդարութիւնը անստհման պիտի թագաւորեն, ինչ որ և տեսնում ենք մենք այժմ»։

Այդ սկզբունքն էր թերագրում նրան և այն ժամանակ, երբ նո տողերիս գրողին համոզում էր, որ Տաճկաստանի հայերը չպէտք է բռնութեամբ և զէնքով պատասխանեն իրանց բռնակալներին՝ վայրենի քրդերին և մոլեսանդ թուրքերի շահատակութիւններին* . . .

Շնուանելին այն է, որ Տօլստոյը իր վարդապետութիւնը ձեռկերպել է վերջնական կերպով երկար տարիների երակոնքից յետոյ, որի յիշատակարաններն են նրա զարմանալի խոր վիպական գրուածքները։ Արդէն «Մանկութիւն և Պատաննեկութիւն» կիսակենսագրական գեղարուեստական վիպակի մէջ նո լուրջ մտատանջութիւնների մէջ է Աստուծոյ, մարդու, սիրոյ և բարիքի մասին (1852 թ.), նոյն մատանչութիւնները և ճշմարտութեան որոնումները մենք տեսնում ենք և հետեւել երկերի մէջ՝ «Կալուածատիրոջ առաւօտը» և «Ղաղախներ» (1861) վիպակների մէջ, որոնք անշաւշտ ինքնակենսագրական նշանակութիւն ունին։ Դրանց հերոսները՝ Նէխլիւտովը և Օլէնինը — Տօլստոյի այն ժամանակուայ հոգեկան գրութիւնն են պատկերացնում, երբ նա որոնում էր օգտակար գործունէութեան իսկական ճանապարհը և ժամանակակից քաղաքակրթութիւնից գժգոհութեան նշոյներ էր ցայց տալիս։ Ճշմարտութիւնը

*.) Այս մասին տես իմ յօդուածը «Մեր Չայնը» թերթի № 97.

Հարկաւոր է ուրիշ շրջանի և դասակարգի մէջ վնասը և սրովհեաև կալուածատէրների հակադիր դասակարգը գիւղացիութիւնն էր—Տօլստոյը նրանց մէջ է սրոնում կեանքի առեղծուածի լուծումը։ Ժողովուրդը, մասսան—միաձոյլ է, նա իւր յարդած ուղիովն է առաջնորդւում, նա անիծեալ հարցերով չի տանջւում, նրա համար ամեն բան պարզ է և լուծուած։ Անհատը անզօր է դտնել այդ ճշմարտութիւնը, իսկ ժողովուրդը արդէն իսկ իր մէջ ամփոփած ունի մարդկային կեանքի խմասութիւնը։ Նա միշտ և բնազդօրէն գնացել է իսկական ճանապարհով և յաղթող է գուրս եկել մինչև իսկ ամենագժուարին դրութիւններից, ապացոյցը տեսէք «Պատերազմ» և խաղաղութիւն» վեպի մէջ, որի գլխաւոր հերոսը ժողովուրդն է, ուսու գիւղացիութիւնը, մասսան (1864—1869)։

Այդ մասսայական հոգերանութիւնը և աշխարհայեցողութիւնը բնական սեփականութիւն է ամեն մի հասարակ գիւղացու (յիշեցէք Կարստանին) և ընդհակառակը անըմբռնելի է բարձր գասակարգի ներկայացուցչի համար, մինչև որ նա չհաւասարուի այդ գիւղացիութեան հետ, չձուլուի ժողովրդի հետ Կարծես ինքն իրան հաշիւ տալու նպատակով Տօլստոյը 1873—76 թ. ստեղծում է իր խոր հոգերանական Աննա Կարենինայ վեպը ու 1881 թուին գրում է իւր նշանաւոր Խոստովանութիւնը, որով կամենում է մաքրուել իր նախկին կեանքի սխալներից, ու որպէս զի ապագային ընթանայ աստուածային ճանապարհով, միակ ուղիղ և իսկական ճանապարհով, որը նախասահմանուած է մարդուս ի վերուստ։ Այդ ժամանակից ի վեր նա գրեթէ բացառապէս նուիրւում է իւր կրօնափիլիսոփայական վարդապետութեան, որը վերակենդանացնել է ուղում առաջին գարու քրիստոնէական կեանքը, իւր անմիջական ջերմ հաւատով, պարզութեամբ, գրեթէ անիշխանական կազմակերպութեամբ^{*}։ Եթէ նա ժամանակ առ ժամանակ էլի երկան է զալիո իրուել գեղարուեստա-

^{*}) Տես Ելցրախէրի Անիշխանականութիւն գիրքը։

գէտ (Խվան Իլիչի մահը, Խաւարի իշխանութիւնը, 1886, Քաղաքակրութեան պտուղները, Կրէյցերեան Սօնատը 1890 թ., Յարութիւն 1899) — նա այդ անում է իւր գեղարտուեստական տաղանդը իւր վարդապետութեանը ծառայեցնելու համար և կրկին ու կրկին յիշեցնելու մարդկանց Մեծ վարդապետի յաւիտենական խօսքերը «Նոր պատուիրան եմ՝ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց, ինչպէս ես ձեզ սիրեցի, որպէս զի դուք էլ միմեանց սիրէք . . .»

Բայց և այսօր էլ, ինչպէս և այն պատմական օրերին, մեր ականջները խուլ են, իսկ մեր սրտերը անապատ ըմբռնելու և իւրացնելու այդ վեհ գաղափարը:

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

